

Ահա՛ եւ կրթութեան տուած հարկը թուրքիոյ մէջ:

Կրթութիւնը, ուսումը, արհեստները, մարդանբը եւն. տարածելու համար բարձրագոյն միութիւններ եւ ընկերակցութիւններ կը դործեն թուրքիոյ մէջ, պետական պաշտպանութենէն եւ հոգաբարձութենէն բոլորովին անկախ:

«Թիւրք Օճագը-ները, գիտենք արդէն, թէ ի՞նչ մեծ դեր կը խաղան երիտասարդութեան հոգեկան ու մշակութային բարձրութեան ու զարգացումի դործին մէջ, Պոլսէն սկսեալ մինչեւ գուտտական ամենախուլ անկիւնները: Եւ միայն անտարբէր երիտասարդներու ձեռքը նետուած գնդակ մը չէ այս կարմակերպութիւնը: Պետական բարձրագոյն պաշտօնատարներէն մինչեւ երկրորդական դէմքեր ու անձնաւորութիւններ կը մասնակցին անոր, ոչ թէ ձեւակաւորութեան համար, այլ տքնելով ու ճիւղ թափելով ճշմարիտ երիտասարդներու նման: Թուրքիոյ մէջ ձեռքեր ու հանգստեան կոչուածներ չկան՝ երբ հայրենիքի եւ Ազգութեան դարձափարն է մարդիկը ստանձորող սասողը, նոր սերունդը դաստիարակելու եւ դայն պիտանի եւ արտադրող ազգակի վերածելու համար:

Ամիսներ առաջ կազմուեցաւ Կրթական Միութիւնը (Մէլայիֆ ձէմիլէթի), կրթական նախարարի նախագահութեան տակ, որ մասնաճիւղերու միջոցով շարք մը նոր դպրոցներ պիտի բանայ Պոլիս եւ գաւառները: Կառավարութիւնը կը արամազրէ նիւթական օժանդակութիւն, բաժին հանելով հայերու լքած դոյրքերէն: Էվգաֆը իր դպրոցական եկամուտները կը յատկացնէ այս Միութեան:

Ճարտարագիտական Ընկերակցութիւնը, ուրիշ նորութիւն մը թուրքիոյ մէջ, կոչուած է մեծագոյն ծառայութիւնը մատուցանելու երկրին, իրր գիտական հիմնարկութիւն:

Ֆիզիքական դաստիարակութեան եւ մարդանբին երկար ատենէ ի վեր զարկ կուտան թուրքերը: Բայի արլէրիֆ, Փութպոլի, եւ չուէտական մարդանբի ճիւղերէ, վերջին տարիներս տենդագին աշխատանք թափած են սկաութիզմի շարժման մէջ: Տասնեակ հազար-

ներու կը հասնի թուրք սկաութներու քանակը, Պոլիս թէ հեռուները:

Կայ եւ թուրք Երաժշտական Միութիւնը, որ երոպականին հետ կը մշակէ եւ կը զարգացնէ սեփական արեւելեան երգն ու երաժշտութիւնը: Նուագածուներու եւ երաժիշտ մասնագէտներու թիւը կարծուածէն աւելի է թուրքիոյ մէջ, պատրաստուած ու հասած գերմանացի եւ իտալացի վարպետներու խնամքին տակ: Պոլսոյ երաժշտանոցը կը նպաստէ դեղարուեստի այս մասի մշակումին ու զարգացման, որ ամէն տարի մասնագէտներու պատուիրակութիւն մը զրկելով Անատոլու, հաւաքել կուտայ թուրք ժողովրդական երգերը, ինչպէս մեր մէջ ըրած են Կոմիտաս վարդապետ, Գրիգոր Սիւնի եւ նմաններ, անհասարկան նախաձեռնութեամբ:

Այսպիսի պատուիրակութիւն մը կրկին ձամբայ ելած է շարաթներ առաջ գէպի Իյնէպոլու, որ հետզհետէ պիտի այցելէ Գասթէմուշի, Պոլու, Պրուսա, Էնկիլիւրի եւն.: Ընթացողութիւնը պիտի տեսէ երկու ամիս: Եթէ ժամանակը բաւէ, պիտի այցելէ նաև Տրապիզոն, Երզնկա, Կարին, Քէմախ եւ Ակն: Մասնաւորաբար պիտի ձայնագրէ «Մեփէթնի Օղլու»^{**}): Ազգային ուրոյն երաժշտութիւնը ծաղկեցնելու այս ճգնումով պէտք է բացատրել Երաժշտական Միութեան զուտ թրքական եղանակներով շինուած յայտագիրները, երգահանգէտներէ ներս:

Հիմնուելու վրայ է գրողներու ընկերակցութիւն մը եւս, որուն համար համազումար մը ունեցան թուրք գրողները Պոլսոյ մէջ, նախագահութեամբ ծանօթ հեղինակ Սալիա Ջիւայի: «Բանաստեղծութիւն, պատմութիւն,

^{**}) Այս սուղերը գրուելէն յետոյ կը հարուղեն, որ Անատոլու մեկնող երաժշտական պատուիրակութիւնը Չանդըրի մէջ յաջողած է ձայնագրել յիսունէ աւելի ժողովրդական երգեր: ԳՆԻ.